ՊԱՐՈՆՏԵՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (XI-XIV դդ.)

ԹՈՐՈՍՅԱՆ Վ. Հ.

Զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում եկեղեցական վարչական միավորը՝ թեմը, համապատասխանեցվեց նախարարություններին փոխարինելու եկած իշխանությունների սահմաններին: Այս գործընթացը սկսվել էր դեռևս վաղ միջնադարից և եկեղեցու կողմից ավատատիրական վարչատնտեսական կառույցի ընդօրինակման հետևանք էր: Այս խնդրով շահագրգռված էին առավելապես աշխարհիկ իշխանությունները: Սրա նպատակը հոգևոր իշխանության օժանդակությունն առավել շահեկան օգտագործելն էր, որը լրացուցիչ ամրություն էր հաղորդում աշխարհիկ իշխանությանը: Դա էր պատճառը, որ աշխարհիկ իշխանություններից յուրաքանչյուրը ձգտում էր իր իշխանության վարչական սահմաններում ունենալ եկեղեցական առանձին թեմ: Այս միտումն առկա էր նաև Զաքարյան Հայաստանի ավատատիրական իշխանություններին: Սեփական եպիսկոպոսական թեմ ունենալու ձգտումը շուտով իրականացնում են Վահրամյանները՝ ստեղծելով առանձին թեմ՝ Նոր Վարագ կենտրոնով[1]: Իրենց իշխանության սահմաններում առանձին եպիսկոպոսական թեմ ստեղծելու անհաջող փորձ են կատարում նաև Պռոշյանները[2]:

Ֆեոդալական վարչատնտեսական կառուցվածքի ընդօրինակումից զատ՝ եկեղեցին ավատատիրական հարաբերություններից վերցրեց նաև իշխանության ժառանգական կարգը: Այս պայմաններում եկեղեցական թեմերի հոգևոր առաջնորդների դերում հաճախ սկսեցին հանդես գալ տեղի աշխարհիկ իշխանական տների ներկայացուցիչները: Աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների այս դրսևորումը առավել ամուր և կենսունակ էր դառնում անկախ պետականության բացակայության պայմաններում: Քննվող ժամանակաշրջանում բազմիցս ականատես ենք լինում իշխանական տների ներկայացուցիչների կողմից եկեղեցական թեմերի առաջնորդությունը ստանձնելու երևույթին: Այսպես, Սյունյաց մետրոպոլիտությունը, Ստեփանոս Օրբելյանից սկսած, շուրջ երեք դար կենտրոնացած էր Օրբելյան իշխանական տան ձեռքին: Նույնը Խաչենի իշխանությունում, որտեղ ևս երկրամասի հոգևոր իշխանությունն իշխանական տան ժառանգական սեփականությունն էր[3]: Այսպես, Խաչենի Հաթերքի իշխան Հասանի (1142-1182) իշխանության ժամանակ Դադի վանքի առաջնորդն էր նրա եղբայր

---

[1] **Շահնազարյան Ա.,** *Վահրամյանների իշխանությունը, Ե., 1990, էջ 149:*

[2] **Հովսեփյան Գ.,** *Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 254:*

[3] **Ուլուբաբյան Բ.,** *Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Ե., 1975, էջ 250:*

Գրիգորիսը[4]: Ավելին, վանքի առաջնորդությունը ժառանգաբար փոխանցվում էր Հաթերքի իշխանազուն եկեղեցականներին, որոնք ավանդաբար կրում էին Գրիգորիս անունը[5]: Ի դեպ, մինչև XVIII դարը Խաչեն գավառում և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր իշխանությունը կենտրոնացած էր Հասան-Ջալալյան տոհմի ձեռքում[6]:

Աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների զուգակցումը բնորոշ էր նաև Երզնկայի և Արտազի նորաստեղծ իշխանություններին: Առաջինի պարագայում երկրամասի հոգևոր ու աշխարհիկ առաջնորդներ են հիշատակվում Սարգիս արքեպիսկոպոսը և նրա որդին՝ Հովհաննես իշխանը[7], իսկ Արտազի իշխանությունում՝ Զաքարիա Ծործորեցին և նրա եղբայր պարոն Պետրոսը[8]: Նկատենք, որ հիշյալ եկեղեցական թեմերում հոգևոր իշխանությունը ևս փոխանցվում էր ժառանգաբար: Այս երևույթն առավել կենսունակ դարձավ օտար տիրապետության պայմաններում, երբ շատ ավատատերեր, օգտվելով հայոց եկեղեցու ապահարկությունից, իրենց տիրույթները օտարին չհանձնելու համար նվիրաբերում էին վանքերին ու եկեղեցիներին: Բացի այդ, վերջիններիս առաջնորդներ էին կարգում իրենց տան ներկայացուցիչներին՝ շարունակելով նվիրաբերած տիրույթների ազատ տնօրինումը: Այս երևույթն էլ Հայաստանում Բագրատունյաց թագավորության անկումից հետո ծնունդ տվեց պարոնտերության ինստիտուտին:

Պարոնտերությունը նախ և առաջ ձևավորվեց ու զարգացավ անկախ, կենտրոնաձիգ պետականության բացակայության պայմաններում: Դա էր պատճառը, որ այն Կիլիկյան Հայաստանում չունեցավ այնպիսի դրսևորում, ինչպես բուն Հայաստանում:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում, ֆեոդալական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ, ֆեոդալական ինքնիշխանությունն արտահայտող տեր, իշխան, մեծ իշխան, իշխանաց իշխան եզրույթներին աստիճանաբար փոխարինում են պատրոն և պարոն բառերը, որոնք ունեին նույն տեր, իշխան, մեծավոր իմաստները[9]:

Պատրոն բառը ծագում է լատիներեն patronus-ից և նշանակում է հովանավոր, պաշտպան[10]: Այն անցել է հունարենին և կիրառություն գտել բյուզանդական «Բասիլիկ» կոչված օրենսգրքերից մեկում, որը գործածական էր նաև XI դարում[11]:

---

[4] Դիվան հայ վիմագրության, պրակ V, կազմեց Ս. Բարխուդարյան, Ե., 1982, էջ 198:

[5] **Ուլուբաբյան Բ.,** *նշվ. աշխ., էջ 149:*

[6] **Մաղալյան Ա.,** *Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII- XIX դդ., Ե., 2007, էջ 77:*

[7] **Քյուրտյան Հ.,** *Երիգա եւ Եկեղեաց գաւառ, հ. Ա, Վենետիկ, 1953, էջ 129, հմմտ. Բաղդասարյան Է., Երզնկայի հայկական իշխանությունը XIII-XIV դարերում (Լրաբեր հասարակական գիտությունների, 1970, N 1, էջ 38):*

[8] *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Ե., 1950, էջ 114-115, հմմտ. Խաչիկյան Լ., Արտազի հայկական իշխանությունը եւ Ծործորի դպրոցը, Աշխատութիւններ, հ. Բ, Ե., 1999, էջ 56-57:*

[9] **Շահնազարյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 147:*

[10] **Дворецкий И. Х.,** *Латинско-русский словарь, М., 1976, с. 732.*

Պարոնտերության առավել շահեկան քննության համար կարևոր է պարզել, թե երբ են այդ եզրույթները կիրառվել հայերի մեջ, և ովքեր են հանդես եկել որպես պատրոն և պարոն: Նշենք, որ ժամանակի հայկական ձեռագրերի հիշատակարաններում և վիմագիր արձանագրություններում հանդիպում ենք բազմաթիվ վկայությունների: «Պատրոն» բառի հնագույն գործածությունը հայոց մեջ հայտնի է Կեչառիսի վանքի 1003 թ. մի արձանագրությունից, ըստ որի՝ Գրիգոր Մագիստրոսը շինում է եկեղեցին իր պատրոնի (Գագիկ Ա Շահնշահի) բարեխոսության համար. «ՆՁԲ (1003) թ. հայոց ի թագաւորութեան Գագկա եւ ի հայրապետութեան Տեառն Սարգսի, ես Գրիգոր Մագիստռոս, որդի Հասանա, շինէցի զէկեղէցիս ինձ ի բարեխոսութիւն եւ իմ պատրոնին եւ իմ որդեացն»[12]: Ժամանակագրորեն հաջորդ վկայությանը հանդիպում ենք Բյուրականի տաճարի հարավային պատի վիմագրում. «ՆՂԳ (1044) թուականութեանս հայոց այս իմ գիր է Զաքարէ իշխանաց իշխանի, որդոյ Վահրամա, որ ազգաւ Պահլաւ, որ ետու զԲիւրականի զթաստակն Շահնշահի՝ իմ պատրոնի հոգոյն...»[13]: Արձանագրությունում հիշատակված «շահնշահը» Գ. Գրիգորյանի հավանական պնդմամբ հայոց արքա Հովհաննես-Սմբատ Բագրատունին է[14]: Վիմագրերի բովանդակությունից հստակ երևում է, որ Բագրատունյաց դարաշրջանում պատրոն տիտղոսը ցույց էր տալիս վասալա-սյուզերենական հարաբերությունների մի համակարգ, որի կազմում հայոց արքաները հանդես են եկել իրենց վասալների՝ տվյալ պարագայում Գրիգոր Մագիստրոսի և Զաքարե Պահլավունու համար որպես գերակա տեր՝ պատրոն: Այս տիտղոսով է XI դարում հանդես գալիս Կարսի վերջին թագավոր Գագիկի դուստր Մարեմ Կյուրոպաղատը. «Ի հինգհարիւրորդի քսան եւ վեց երորդի (1077) ամի թուաբերութեանս Հայոց, ի թագաւորութեանն Յունաց Միխայլին, որդւոյ Տուկծին կայեր Հռոմոց, ի կուրապաղատութեանն Մարեմայ բարեպաշտի եւ հզաւրի, մեր պատրոնի»[15]: Դատելով վերոբերյալից՝ XI դարում պատրոն տիտղոսը դեռևս բնորոշում էր աշխարհիկ բարձրագույն իշխանությունը:

Այս տերմինը, առավելապես գերագույն իշխանի նշանակությամբ, հաճախակի սկսում է կիրառվել XIII դարում: Դրան զուգահեռ՝ աղբյուրներում սկսում են հիշատակվել նաև «պարոն» և «պարոնություն» եզրույթները: Վերջիններս ժամանակի ընթացքում գործածությունից դուրս են մղում «պատրոնին», և XIV դարից

---

[11] **Գրիգորյան Գ.,** *Պատրոն տերմինը միջնադարյան հայ աղբյուրներում (Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, N 6, Ե., 2005, էջ 149):*

[12] **Հովսեփյան Գ.,** *նշվ. աշխ., էջ 159:* **Մաթևոսյան Կ.,** *Գրիգոր Մագիստրոս Պահլավունու արձանագրությունը Կեչառիսում (Անի-Շիրակի պատմության էջեր, Ե., 2010, էջ 138):*

[13] **Տեր-Մինասյան Ե.,** *Ամբերդաձորի հնությունները և արձանագրությունները (Էջմիածին, 1961, թ. Ե, էջ 48):*

[14] **Գրիգորյան Գ.,** *նշվ. աշխ., էջ 151:*

[15] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դարեր, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Ե., 1988, էջ 109:*

աղբյուրներում գլխավորապես հանդիպում ենք «պարոնի» և «պարոնության» հիշատակումների:

«Պարոնը» փոխառված է միջնադարյան Եվրոպայում լայնորեն տարածված «բարոն» տիտղոսից և դրա հնչյունափոխված ձևն է: Այսպես, Վայոց ձոր գավառի Եղեգիք կամ Եղեգիս ավանի իշխանական տան դարպասի արձանագրությունում Սյունյաց Տարսայիճ իշխանը հիշատակվում է բարոն տիտղոսով. «Աստուած շնորհաւոր անէ դարբաս բարոն Տարսայիճին, Մինայ Խաթունին՝ իւր ամուսնաւ թվ.: ՉԻԳ: (1274)»[16]: Խնդրո առարկա տերմինները մեծ մասամբ եղել են աշխարհիկ իշխանությունը բնորոշող տիտղոսներ: Ժամանակի վիմագիր արձանագրություններում հաճախ ենք հանդիպում «ի պարոնութեան» եզրույթին, որը հիմնականում հատկանշում էր տվյալ նահանգի կամ գավառի տիրոջ աշխարհիկ իշխանությունը: Այսպես, Սյունյաց Օրբելյաններին պատկանող Թազագյուղի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արձանագրություններից մեկում կարդում ենք. «…ի ժամանակին Արղուն խանին եւ իշխանութեամբ Տարսայիճին եւ պարոնութեամբ Լիպարտի եւ հայրապետութեամբ տէր Գրիգորոս (Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի (1293-1306 թթ.) – Վ. Թ.)…»[17]: Հայտնի է, որ Սյունյաց Տարսայիճ իշխանի օրոք նրա եղբորորդին՝ Լիպարիտը, Սյունյաց գավառներից մեկի իշխանն էր՝ պարոնը[18]: Պռոշյան իշխաններին պատկանող Փառականք գյուղի գերեզմանատան խաչքարի արձանագրությունում ևս «պարոնությունը» բնորոշում է Պռոշ իշխանի՝ այդ տարածքներում ունեցած աշխարհիկ իշխանությունը. «Յաշխարհակալութիւն Ապաղա դանին, ի պարոնութիւն Պռոշոյ…»[19]: Ժամանակի ընթացքում «պարոն» տերմինը դադարում է բնութագրական լինել միայն բարձրաստիճան իշխանավորների համար: XIV դարում այս տիտղոսը հատկացվում էր նաև մեծատուն մարդկանց՝ անկախ նրանց ազնվական ծագումից[20]:

Դրա հետ մեկտեղ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում «պարոն» և «պարոնություն» տերմինները միաժամանակ սկսում են հատկանշել աշխարհիկ իշխանությունների տիրական իրավունքները ոչ միայն իրենց կալվածքների, այլև դրանցում առկա հոգևոր հաստատությունների նկատմամբ: Դրա հիմնական էությունն այն է, որ հայ աշխարհիկ իշխաններն իրենց հովանավորության տակ էին վերցնում հիմնականում սեփական տիրույթներում գտնվող վանքերն ու

---

[16] Դիվան հայ վիմագրության, պրակ III, կազմեց Ս. Բարխուդարյան, Ե., 1967, էջ 115: Հետաքրքրական է, որ Սյունաց Օրբելյան իշխաններն աղբյուրներում հիշատակվում են նաև միջնադարյան Եվրոպայում տարածված «կոմս» և «մեծ կոմս» տիտղոսներով (Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 224: ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 117):

[17] Դիվան հայ վիմագրության, պրակ IV, կազմեց Ս. Բարխուդարյան, Ե., 1973, էջ 198:

[18] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Ե., 1984, էջ 83: Գավառի տեղագրության մասին տե՛ս **Հովսեփյան Գ.,** նշվ. աշխ., էջ 440:

[19] Դիվան հայ վիմագրության, պրակ IV, էջ 253:

[20] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 122, 431:

եկեղեցիները: Եվ ահա այս հովանավորությունը ժամանակին բնորոշվել է «պարոնություն» տերմինով: Ասվածը լավագույնս փաստվում է Դոփյան իշխանների արձանագրությամբ, որով վերջիններս Ավագ եպիսկոպոսին և նրա եղբայր Մանվել աբեղային են հանձնում երեք վանքերի եպիսկոպոսությունը և պարոնությունը. «... այս մեր գիր է իշխանական հրամանի:

Ես Տուրսունս, Մեյտիս, Պռոշս, Գրիգորս, Հասանս և ողբայրքս և որդիքս մեր զայս հաստատ սիկիլս տուաք տր. եպիսկոպոսին և իւր եղբայր Մանուէլ Աբեղային, որ մեր հայրենի աթոռն զԴադի վանս, զԽաթրի վանս, զԳետամէջն, որ մեր պապանցն մեզ մնացած, վասն սոցա լաւ միամտութեան համար. զի վանորայքս մարդ չկայր, որ յառաջն կայր և շէն պահէր և զեկեղեցիքս լուսաւորէր. յայս պատճառէս երես դրաք և զայս սբ. աթոռնին նոսա ապսպրեցաք. և զերկու իշխանութիւն, որ է եպիսկոպոսութիւն և զպարոնութիւն էլ հէնց ի նոսա յանձնեցաք»[21]: Տվյալ դեպքում «պարոնությունը» բնորոշում է վանական հիշյալ հաստատությունների նկատմամբ Դոփյան իշխանների ունեցած աշխարհիկ իշխանությունը, որն արդեն հայտնի պատճառներով փոխանցվում էր եկեղեցական դասի ներկայացուցիչներին:

Վանքերի ու եկեղեցիների հովանավորությունը, իհարկե, չէր սահմանափակվում վերոգրյալով: Այն վերջիններիս աշխարհիկ հովանավորներին միաժամանակ տալիս էր եկեղեցու ներքին գործերին միջամտելու, նրա դիրքը, մասնավորապես օտար տիրապետության պայմաններում ի շահ իրենց օգտագործելու, ինչպես նաև հոգևոր-եկեղեցական դասի նկատմամբ հաճախ գերակա դիրք գրավելու լայն հնարավորություններ:

Ինչպես վերը նշվեց, «պարոնությունը» բնութագրում էր աշխարհիկ իշխանների տիրական իրավունքները ոչ միայն իրենց կալվածքների, այլև նրանց կողմից հովանավորվող հոգևոր-եկեղեցական հաստատությունների նկատմամբ: Ասվածը փաստվում է վիմագիր մի շարք վկայություններով, որտեղ վանքերի ու եկեղեցիների հովանավոր իշխանները հիշատակվում են որպես այդ հաստատությունների տերեր: Այսպես, Հաղբատի 1245 թ. արձանագրություններից մեկում կարդում ենք. «Ի տերութեան սուրբ ուխտիս Շահնշահի ի թուին ՈՂԴ (1245) շինեցաւ գեղեցկազարդ տաճարս»[22]: Արդեն 1273 թ. Հաղբատի մեկ այլ արձանագրությունում որպես վանքի տեր հանդես է գալիս ամիրսպասալար և աթաբեկ պարոն Սադունը. «Թվականին

---

[21] *Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 216: Բ. Ուլուբաբյանը, հղելով արձանագրության Մ. Բարխուտարյանցի ընդօրինակությունը, նշում է, որ դրա «և երկու իշխանութիւն» արտահայտությունը վերաբերում է երկու թեմերի՝ Դադիվանքի և Ծարա (Խաթարավանքն ու Գետամեջի վանքը միասին) առաջնորդությանը (***Ուլուբաբյան Բ.,** *նշվ. աշխ., էջ 344), մինչդեռ Գ. Կիրակոսյանը, վկայակոչելով Ս. Բարխուդարյանի ընդօրինակությունը, որը վերցված է Եսայի կաթողիկոսի ձեռագրի ընդօրինակությունից, իրավացիորեն պնդում է, որը խոսքն այստեղ վերաբերում է հոգևոր և աշխարհիկ իշխանություններին (***Կիրակոսյան Գ.,** *Հայաստանը Լանկ-Թեմուրի և թուրքմենական ցեղերի արշավանքների շրջանում, Ե., 1997, էջ 211):*

[22] **Ղաֆադարյան Կ.,** *Հաղբատ, Ե., 1963, էջ 222:*

ՉԻԲ (1273) յիշխանութեան եւ ի տէրութեան սուրբ ուխտիս աթաբակ ամիրսպասալար պարոն Սադունին…»[23]: Համեմատության համար նշենք, որ նույն Սադուն Մահկանաբերդցին Հաղբատի մեկ այլ վիմագրում հանես է գալիս նաև որպես գավառի տեր. «Ի թվիս ՉԻԹ (1280), յիշխանութեան տեղոյս Սադունին»[24]:

«Եկեղեցու աշխարհիկ «պատրոնները» կամ «վանաց տերերը», - գրում է Ա. Հովհաննիսյանը, - իրենց հովանու կամ ազդեցության տակ էին առնում եկեղեցին կամ վանքը, դիտում այն որպես «սեփական ուխտ», «հայրենիք, ֆեոդալական «ժառանգություն»«[25]: Եկեղեցական հաստատությունների նկատմամբ աշխարհիկ իշխանությունների նման իրավունքների ձեռքբերման հետևյալ ուղիները կային.

ա. Նախ և առաջ անհրաժեշտ էր, որ աշխարհիկ իշխանները վանքը կամ եկեղեցին վերցնեին իրենց հովանու ներքո, ինչը ենթադրում էր տվյալ հաստատությունների օգտին կատարել նվիրատվություններ, ապահովել դրանց բարեկեցությունը: Սակայն ոչ բոլոր նվիրատուներն էին, որ ձեռք էին բերում նման իրավունքներ: Այն առաջին հերթին պայմանավորված էր աշխարհիկ պարոնի զբաղեցրած դիրքից, ինչպես նաև ունեցվածքից: Ասվածը փաստվում է Այրիվանքի Իվանե Աթաբեկի արձանագրությամբ, որտեղ կարդում ենք. «եկի ի սբ ուխտս ի յԱյրի վանս եւ տեսի զեկեղեցիքս եւ սուրբքս եւ ինձ անոշ թուեցաւ, յիմ անուն արարի, զիմ յիշատակս ի վերայ գրեցի եւ ետու յիշատակ զԲերդաղն սբ կաթուղիկէիս լուսացուի»[26]: Վիմագրից հստակ երևում է, որ վանքի հովանավորությունն Իվանեն ստանձնել է իր իսկ ցանկությամբ: Վանքի՝ Իվանեի տան «սեփականություն» հանդիսանալը փաստվում է նաև նրանով, որ այն շուտով վաճառվում է Խաղբակյան Պռոշ իշխանին. «Շնորհիւ Աստուծոյ ես Պռոշ իշխան որդի Վասակայ յազգէ Հաղբակայ գանձագին արարի ի տերանց աշխարհիս սբ ուխտս Այրի վանք լերամբ եւ դաշտաւ եւ ամենայն կազմութեամբ, որ կայր ի սմա…»[27]: Վիմագրում հիշատակված «տերանց աշխարհը» վերաբերում է Իվանեի և Ավագի իշխանությանն ու կալվածներին: Նշենք, որ քննվող ժամանակաշրջանում տարածված էր աշխարհիկ իշխանների կողմից վանքերի գնման երևույթը: Իշխանական տներին պատկանող տոհմական հոգևոր կենտրոնները, որոնք տվյալ իշխանական տան համար հիմնականում ծառայում էին որպես տոհմական դամբարան, աշխարհիկ տերերի կողմից արժանանում էին առանձնակի վերաբերմունքի. «Շինեցաք եւ այլ բազում եկեղեցիս եւ վանորայս բայց զտեղի հանգստարանս մերոյ առաւել պատուով մեծարացուցաք եւ

---

[23] Նույն տեղում, էջ 193:

[24] Նույն տեղում, էջ 197:

[25] **Հովհաննիսյան Ա.,** *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Ե., 1957, էջ 305:*

[26] **Հովսեփյան Գ.,** *նշվ. աշխ., էջ 53:*

[27] *Նույն տեղում, էջ 305:*

իշնացուցաք ամենայն գոյիւք լերամբք եւ դաշտաւք», - կարդում ենք Մարմաշենի Վահրամ իշխանի շինարարական վիմագրում[28]: Կ. Մաթևոսյանի իրավացի դիտարկմամբ Հառիճի վանքը կմնար Շիրակի բազմաթիվ փոքր վանքերից մեկը, եթե չդառնար Զաքարե ամիրսպասալարի սեփական վանքն ու նրա գլխավոր շինարարական ձեռնարկումների վայրը[29]:

բ. *Վանքերի կամ եկեղեցիների նկատմամբ «սեփականատիրական» իրավունքի ձեռքբերման հաջորդ ճանապարհն այդ հաստատությունների գնումն էր: Հառիճի վանքի սեփականատիրական իրավունքը Զաքարե ամիրսպասալարը ձեռք էր բերել գնման ճանապարհով. «Գանձագին արարի զհոչակաւոր սուրբ ուխտս Հառիճայ յիւր բնական հայրենատերացն»[30]: Այս ճանապարհով եկեղեցական հաստատությունների պարոններ էին դառնում նաև նոր ձևավորված, ազնվական ծագում չունեցող տոհմերը: Այսպես, XIII դարի կեսերին Զաքարյան Հայաստանում հաստատված մանազկերտցի վաճառական Ումեկը Իվանեի որդի Ավագ Զաքարյանից գնում է Գետիկի վանքը. «Յուսով ողորմութեամբ Աստուծոյ՝ ես Ճարս որդի պատրոն Ումեկին, թոռն Ճարին, աշխարհաւ Մանծկերտցի, յաշխարհակալութեան Արղունին եւ թագաւորութեան Վրաց Դեմետրի Բագրատունոյ, իմ հայրն Ումեկն գնել էր զԳետիկ ի :ԽՌ: (40 հազ.) կարմիր դուկատի»[31]: Զաքարյան Հայաստանում վանքեր են գնում նաև Ումեկի ազգական, Կարինից տեղափոխված Ստեփանոսը և Սեբաստիայից եկած վաճառական Ուքան և Պապքան եղբայրները: Առաջինը հայտնի է Խոռակերտի արձանագրությունից. «… ես Ստեփանոս որդի Յոհանա գնեցի զԽոռակերտ և զիր գեղեանզայգին…»[32]: Ուքան և Պապքան եղբայրները հաստատվում են Անիում ու Ումեկյանների նման ձեռք բերում տոհմական եկեղեցի. «Շնորհիւն Աստուծոյ ես Ուքան Քարիմադինս և եղբայր իմ Պապքան Վախրադինս … եւ հարսն իմ Դապտայ խաթունս գնեցաք զվանքս իւր ամենայն սահմանաւք հողով և ջրով…»[33]:*

գ. *Վանքերի ու եկեղեցիների նկատմամբ ունեցած «սեփականատիրական» իրավունքը այլ իրավունքների շարքում ևս փոխանցվում էր ժառանգաբար[34]: Ասվածը փաստվում է Գետիկի օրինակով, որի հովանավորությունը փոխանցվել էր Իվանեի որդի Ավագին: Այս հիմքով է, որ Ավագը վանքում գերեզմանատեղ է հատկացնում իրենց տան կառավարիչ /հեջուբ/ Գրիգոր Տղային. «Սա (Գրիգոր Տղան - Վ. Թ.)*

---

[28] **Орбели И.,** *Надписи Мармашена (Избранные труды, Е., 1963, с. 442).*

[29] **Մաթևոսյան Կ.,** *Հառիճի վանքի պատմությունից, Անի-Շիրակի պատմության էջեր, Ե., 2010, էջ 202:*

[30] *Նույն տեղում, էջ 203:*

[31] *Դիվան հայ վիմագրության, պրակ VI, կազմեցին Ս. Ավագյան, Հ. Զանփոլադյան, Ե., 1977, էջ 71:*

[32] **Հովսեփյան Գ.,** *Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, Ե., 1983, էջ 229:*

[33] *Նույն տեղում, էջ 232, հմմտ.* **Орбели И.,** *Армянские надписи на камне (Избранные труды, Е., 1963, с. 472).*

[34] *Энциклопедический словарь, т. XXIII, издатели Ф. А Брокгауз и И. А. Ефрон, СПб., 1898, с. 41.*

խնդրեց յԱւագէն, յորդոյն Իւանէի, զվանքն Գետիկ՝ իւր տեղի գերեզմանի: Եւ վասն յոյժ սիրելոյ զնա՝ ետ նմա»[35]: Նույն սկզբունքով էր, որ Ումեկի գնած Նոր Գետիկի վանքի պարոնության իրավունքը փոխանցվում է նրա ժառանգներին. «Կամաւ ամենակալին Աստուծոյ, ի թվին հայոց ՉԽ (1291), պարոնութեան Իգդիշ Խաթունին եւ եղբարց իւրոց Արղութին եւ Թաղադամուրին՝ որդոց Քարիմադինին, որդոյ մեծին Ումեկին»[36]: Ուշագրավ է, որ ըստ Ս. Ավագյանի, Ումեկը պարոնության իրավունք ձեռք է բերել ոչ այնքան վրաց Դավիթ թագավորի կամ մոնղոլական ավագանու բարեհաճությամբ, որքան Նոր գետիկի վանքը և վանքապատկան կալվածքները ձեռք բերելու շնորհիվ[37]:

Չնայած վերոգրյալին՝ եկեղեցիներն ու վանքերը Հայաստանում աշխարհիկ իշխանների սեփականությունը չէին, և վերջիններս դրանք հսկում ու հովանավորում էին միայն տիրության իրավունքով[38]: Կանոնական իրավունքն արգելում էր աշխարհիկ տերերին եկեղեցական հաստատությունները դիտել իբրև սեփական ժառանգություն. «Զի թագաւորաց եւ իշխանաց,- գրում է Մխիթար Գոշը,- միանգամայն եւ ամենայն հաւատացելոց շինել վանս ոչ յաղագս մարմնաւոր ինչ յուսոյ է, այլ մանավանդ՝ հոգևոր, յաղագս այնսիկ ոչ պարտի ժառանգութիւն լինել»[39]: Վանքերի սեփականության հարցում համամիտ ենք Գր. Գրիգորյանի այն տեսակետին, ըստ որի՝ հայոց մեջ եկեղեցական հաստատությունների «տերն ու տնօրենը կաթողիկոսն էր»[40]: Վանքերի՝ կաթողիկոսական իշխանությանը պատկանելու վերաբերյալ ուշագրավ փաստարկման ենք հանդիպում Գրիգոր Տղա կաթողիկոսի՝ Հաղբատի առաջնորդ Գրիգոր Տուտեորդուն հղած նամակում, որտեղ, քննադատելով վերջինիս ընդդիմադիր դիրքորոշումը կաթողիկոսական իշխանության նկատմամբ, կաթողիկոսը գրում է. «Արդ յայսմեհետէ լռեալ դադարեսցէ քոյն առ ի մէնջ զիր և բան…: Քեզ զի՞նչ գոյ հաղորդութիւն առ Հաղբատ. այն մեր է սեփհական (ընդծգումը մերն է - Վ. Թ.), և տեղի յիշատակի. եթէ կայ մեզ կեայ»[41]:

Հայտնի է, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում որպես պարոններ հանդես են եկել ոչ միայն աշխարհիկ, այլև հոգևոր իշխանության կրողներ, որոնք այս դեպքում կոչվում էին պարոնտեր: Սա նշանակում է, որ նրանք օժտված են եղել նաև աշխարհիկ իշխանությամբ, այսինքն՝ ունեցել են ժառանգական կալվածներ, որոնց տիրել են սեփականատիրական իրավունքով: Այստեղ մասնավոր ուշադրության է

---

[35] **Կիրակոս Գանձակեցի,** *Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 223:*

[36] *Դիվան հայ վիմագրության, պրակ VI, էջ 104:*

[37] **Ավագյան Ս.,** *Վիմագրական պրպտումներ, Ե., 1986,էջ 107:*

[38] **Գրիգորյան Գ.,** *Սյունիքի վանական կալվածատիրությունը IX-XIII դարերում, Ե., 1973, էջ 69:*

[39] **Մխիթար Գոշ,** *Գիրք Դատաստանի, աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի, Ե., 1975, էջ 33:*

[40] **Գրիգորյան Գ.,** *նշվ. աշխ., էջ 63:*

[41] *Գրիգորի Կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ Նամականի, Վենետիկ, 1865, էջ 51:*

արժանի այն հանգամանքը, որ հայ հոգևոր-եկեղեցական դասի ներկայացուցիչները «պարոն» կոչմամբ սկսում են հանդես գալ միայն XV դարում[42]. «Եվ ահա կյանքի է կոչվում սոցիալական մի նոր տերմին՝ «պարոն-տէր»,- գրում է Լ. Խաչիկյանը,- որը հատկացվում է բոլոր այն հայ կալվածատեր-ֆեոդալներին, որոնք շարունակում են իրենց ձեռքում պահել իրենց հայրենական կալվածքները, լինելով միաժամանակ և «պարոն» (այսինքն՝ աշխարհիկ իշխան) և «տէր» (այսինքն՝ հոգևոր առաջնորդ)»[43]: Դիտելի է, որ հայ եկեղեցական շատ գործիչներ (դիցուք, Սյունյաց մետրոպոլիտներից Ստեփաննոս Օրբելյանը[44], Հովհաննես Օրբելը, Ստեփաննոս Տարսայիճը, Արտազի թեմի առաջնորդ Զաքարիա Ծործորեցին և այլք), ովքեր հայ պատմագրության մեջ իրավացիորեն կոչվել են պարոնտերեր[45], ժամանակի աղբյուրներում հանդես չեն գալիս այդ տիտղոսով: Վերջիններիս պարոնտիրոջ տիտղոսի վերագրումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ նրանք համապատասխանաբար Սյունյաց Օրբելյան և Արտազի իշխանական տների ներկայացուցիչներն էին, այսինքն՝ տվյալ նահանգի թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ իշխանությունը միաժամանակ եղել է միևնույն իշխանական տան ձեռքում: Հիշյալ եկեղեցականների «պարոնտեր» տիտղոսով հանդես չգալը գլխավորապես պատճառաբանվում է նրանով, որ տվյալ ժամանակաշրջանում այդ նահանգներում դեռևս կենսունակ էին աշխարհիկ իշխանությունները, և առաջիններն այդ պայմաններում դժվար թե կարողանային հանդես գալ ոչ միայն որպես նահանգի «տէր» (հոգևոր առաջնորդ), այլ նաև «պարոն» (աշխարհիկ իշխան):

Պարոնտերությանը բնորոշ էր եկեղեցական պաշտոնների ժառանգաբար փոխանցումը, որն ավելի վաղ էր դրսևորվել հայոց մեջ: Այն նախատեսված չէր կանոնական նորմերով: Ավելին, դեռևս վաղ միջնադարյան կանոնական որոշումներում հանդիպում ենք սույն երևույթն արգելող դրույթի. «Զի ո՛չ է պարտ եպիսկոպոսին՝ եղբաւրն կամ որդւոյ կամ այլում ազգականի շնորհել զպատիւ եպիսկոպոսութեան, որպէս ինքն կամի ձեռնադրել, քանզի ժառանգաւոր եպիսկոպոսութեան իւրոյ առնել՝ չէ իրաւացի, զԱստուծոյ շնորհեալ մարդկային սիրոյ:

---

[42] ԺԵ դարի ձեռագրերի հիշատակարաններ, մ. Ա, կազմեց Լ. Խաչիկյանը, Ե., 1955, էջ 316:

[43] Նույն տեղում, հ. Բ, կազմեց Լ. Խաչիկյանը, Ե., 1958, էջ LXIV:

[44] Այստեղ առանձնակի հետաքրքրական է Ստեփաննոս Օրբելյանի օրինակը: Նա, վերադառնալով Կիլիկյան Հայաստանից, որտեղ ստացել էր մետրոպոլիտության աստիճան, այնտեղից բերած կաթողիկոսական և թագավորական շրջաբերականներով ներկայանում է Արղուն խանին, միաժամանակ վերջինիս ցույց տալով հայրենի աշխարհիկ ու հոգևոր տիրույթներին վերաբերող իր հոր՝ Տարսայիճ Օրբելյանի հրամանը, որով նրա տիրապետության տակ գտնվող վանքերը ժառանգական բաժին էին տրվում Սյունյաց թեմին: Արղունն էլ, տեսնելով այս ամենը, հրամայում է գրել հրովարտակ, որով «վերստին հաստատեաց ի մեզ (Ստեփաննոս Օրբելյանին - Վ. Թ.) զբովանդակ և կրկին իշխանութեամբ հոգեւոր և մարմնաւոր» (Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 481-482):

[45] **Խաչիկյան Լ.,** *Սիւնեաց Օրբէլեանների Բուրթէլեան ճիւղը, Աշխատութիւններ, հ. Բ, Ե., 1999, էջ 33,* **նույնի՝** *Արտազի հայկական իշխանութիւնը եւ Ծործորի դպրոցը (նույն տեղում, էջ 56):*

Քանզի եւ ոչ զեկեղեցի Քրիստոսի ընդ ժառանգաւորութեամբ արժանէ դնել: Ապա թէ ոք արասցէ զայս՝ անհաստատ լիցի ձեռնադրութիւն նորա եւ ինքն որոշեսցի»[46]: Ուշադրության է արժանի այն փաստը, որ սույն կանոնը խնդրո առարկա ժամանակաշրջանում կրել էր բովանդակային փոփոխություն: Մխիթար Գոշը, այն նույնությամբ ներմուծելով «Դատաստանագիրք», կատարում է հետևյալ հավելումը. «Կանոնական իրաւունք այսպէս է. զի ոչ իշխէ իւրոյն տալ, եւ ոչ միայն ձեռնադրել, եւ ոչ զեկեղեցին ժառանգութիւն առնել: Ապա եթէ յանդգնի, հոգևոր դատաստան է. թէ հաճոյ բազմաց թուեսցի՝ աւրինութեամբ մասնաւորաւ հաստատել...»[47]: Այսպիսով փորձ էր արվում օրինական բնույթ հաղորդել արդեն իսկ արմատացած երևույթին: Սույն միտումը հանդիպում է նաև «Դատաստանագրքի» մեկ այլ հոդվածում[48]: Եկեղեցական պաշտոնների ժառանգաբար փոխանցման երևույթը հատուկ էր ոչ միայն բարձրաստիճան հոգևորականությանը, այլև գյուղական քահանայությանը: Այս առումով ուշագրավ է Հերհեր գյուղի 1149 թ. մի վիմագիր, ըստ որի՝ ոմն Գրիգոր կրոնավոր, բնակություն հաստատելով նույն գյուղում, դառնում է տեղի Գագիկ քահանայի ժառանգավորը, քանի որ վերջինիս տոհմը չուներ ժառանգներ[49]:

Այս երևույթի դեմ պայքարը թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր իշխանությունների կողմից չունեցավ գործնական դրսևորում: Չնայած այս ամենին, կային գործիչներ՝ գլխավորապես հոգևոր դասից, որոնք սուր քննադատության ենթարկեցին այն: Նրանցից թերևս առավել կոշտ դիրքորոշմամբ աչքի ընկավ ժամանակի եկեղեցական նշանավոր գործիչ Ներսես Լամբրոնացին: «Եւ եպիսկոպոսքն այժմ ոչ մինչև ի մահն համբերեն,- գրում է Ներսես Լամբրոնացին,- այլ բազում կենօք զաթոռն ընտանեացն վիճակէն՝ որպէս զինքեանց սեփական. ի վերայ որոյ ոչ գոյր որ նայի և ոչ որ խնդրէ զիրաւունս Աստուծոյ»[50]: Այս ամենը, ըստ Լամբրոնացու, հանգեցրեց մեկ այլ երևույթի. «Ի մի տեղն ուր բաւական էր մի կամ երկու եկեղեցի ժողովարան, այժմ տեսանի բազումս և անթիւս ծակոտեալ ոմբոլոնս, ոչ ի փառս Աստուծոյ, այլ անհնազանդութեանն և թշնամութեանն երիցանց աշակերտս. որպէս զի միմեանց հակառակս կացեալ զժողովուրդս յիրերաց քեզքեսցեն. և այսպէս զմարտ թշնամութեանն աճեցուսցեն, և իբր զի հայրենիս որդւոցն զնոյն թողուցու»[51]: Դիտելի է, որ նույն Լամբրոնացին իր հայր Օշինից որպես ժառանգություն ստացել էր Սկևռայի եկեղեցին ու վանքը՝ իր հողատիրույթներով, և 30 հազար դուկատ դրամ[52]: Բացի այդ, հայտնի է, որ Տարսոնի ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր

---

[46] *Կանոնագրիք հայոց, հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Ե., 1964, էջ 94:*

[47] **Մխիթար Գոշ,** *Գիրք Դատաստանի, էջ 53:*

[48] *Նույն տեղում, էջ 33:*

[49] *Դիվան հայ վիմագրության, պ. III, էջ 49:*

[50] **Ներսես Լամբրոնացի,** *Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847, էջ 524:*

[51] *Նույն տեղում:*

[52] **Ալիշան Ղ.,** *Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 283-284:*

իշխանությունը Ներսես Լամբրոնացու առաջնորդության տարիներին կենտրոնացած է եղել նրա ընտանիքի ձեռքին[53]: Եկեղեցական պաշտոնների ժառանգաբար փոխանցումը Ներսես Լամբրոնացին իրավացիորեն պայմանավորում էր անկախ պետականության բացակայությամբ: Մատնանշելով Բագրատունյաց և Արծրունյաց ժամանակները՝ նշում էր. «Ոչ առ նոքօք, որպէս տարացոյց տան պատմութիւնք ժամանակաց, եկեղեցիք ժառանգութիւնք և ոչ ժողովուրդն առանց հովուաց տածէին, և ոչ վանորայք ի քուերոդիսն պատսպարէին»[54]: Ավելին, նա նույնիսկ մատնացույց էր անում այս երևույթի սկզբնավորման որոշակի ժամանակ. «Այլ այս չարիք չունի բազում ինչ ժամանակ. զի սկսաւ ընձիւղել. գրեթէ հարիւր ամ աւելի կամ պակաս՝ յորմէ հետէ տապալեցաւ իշխանութիւնն»: Իսկ իշխանությունների կրավորական դիրքորոշումն այս հարցում պայմանավորվում էր երևույթի արմատավորմանը նպաստելու վերջիններիս ցանկությամբ. «... և բնաւ փոյթ ումեք չեղն առ ի կարձել զսոյն աշխատել. այլ մանաւանդ քանի ընդերկարութեամբ հանանայ՝ որպէս զօրէնս ըմբռնեմք զյանցանս»[55]: Բացահայտ քննադատության չենթարկելով Գրիգոր Լուսավորչի տոհմի և Պահլավունիների կողմից կաթողիկոսական աթոռին ժառանգաբար տիրելը՝ Լամբրոնացին, այնուամենայնիվ, նշում է. «... և ոչ ասեն թէ տէր Ներսէս (նկատի ունի Ներսես Շնորհալուն – Վ. Թ.) արժանի յաջորդեաց յեղբօրէն, այլ զի եղբայր՝ վասն այնորիկ և եղբօրն փոխան»: Լամբրոնացին, այս երևույթը չարիք համարելով, հավելում է. «... ամենեքեան ի նոյնս կործանեալ հարան, և ակն ի վեհագոյն աթոռն տան՝ ունելոյ զմեղացս պատճառ. եպիսկոպոսք զվիճակս, հարք զվանորայս, քահանայք զեկեղեցիս մարմնական ընտանեացն գրեն որպէս զմարմնական ժառանգութիւն»[56]: Նկատենք, որ միջնադարում ազնվականական ընտանիքների կողմից եպիսկոպոսական աթոռներին ժառանգաբար տիրելու երևույթը տարածված էր նաև Արևմտյան Եվրոպայում[57]:

Վանքերի և եկեղեցիների հովանավորությունն աշխարհիկ իշխանները չէին սահմանափակում միայն այդ հաստատությունների բարեկեցության ապահովմամբ: Այն հնարավորություն էր ընձեռում աշխարհիկ իշխաններին միջամտելու եկեղեցական գործերին, որը դրսևորվում էր նաև հոգևոր առաջնորդների նշանակման գործում: Աշխարհիկ իշխանությունների կողմից եկեղեցու գործերին միջամտելու երևույթին բազմիցս ականատես ենք լինում քննվող ժամանակաշրջանում: Այս առումով Մ. Գոշի «Դատաստանագրքում» կարդում ենք. «Ոմանք տանուտեարք եւ ազատք ի վանաց վերայ իշխանութիւն առնեն եւ

---

[53] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, Ե., 1988, էջ 260-261:*

[54] **Ներսես Լամբրոնացի**, *նշվ. աշխ., էջ 526:*

[55] *Նույն տեղում:*

[56] *Նույն տեղում, էջ 535-536:*

[57] **Мажуга В.,** *Королевская власть и церковь во франкском государстве VI в. (Политические структуры эпохи феодализма в Западной Европе (VI-XVII вв.), Л., 1990, с. 49).*

վանական՝ զոր կամին հանեն եւ զոր կամին՝ նստուցանեն»[58]: Քննվող երևույթի եզակի վկայություն է ներառում Մորոձորո վանքի Իվանե Աթաբեկի շինարարական արձանագրությունը, որի վերջաբանում կարդում ենք. «Նորոգեցաւ Սուրբ Աստուածածինս յառաջնորդութեան հաւր Եւագրի հեզի եւ խոնարհի եւ հաստատեցի (Իվանեն - Վ. Թ.) զնա առաջնորդ յազգէ ցազգ մինչեւ յաւիտեան»[59]: Սույն արձանագրությունը հետաքրքրական է երկու առումով. նախ հստակ երևում է աշխարհիկ իշխանի վճռական դերը վանքի առաջնորդի նշանակման հարցում, բացի այդ, հոգևոր հիերարխիայի միջին կամ ստորին աստիճանների համար, որպիսիք են առանձին վանքերի առաջնորդները կամ վանահայրերը, ժառանգական իրավունք սահմանող վկայություններ մեզ հայտնի չեն, և Իվանեի այս հրամանագիրը հայր Եվագրին «յազգէ ցազգ մինչեւ յաւիտեան» Մորոձորո վանքի առաջնորդ հաստատելու մասին այդօրինակ միակ վկայությունն է հայ վիմագրական հուշարձաններում[60]:

Աշխարհիկ պարոնների կողմից եկեղեցու ներքին գործերին միջամտելու մասին ուշագրավ վկայություն է ներառված Սանահնի վանքի 1265 թ. նվիրատվական արձանագրությունում. «Ի թվիս ՉԺԴ: Կամաւն Աստուծոյ, ես՝ Աբրահամ, Փուչկին որդին, ամուսին իմ՝ Արզոյն, եւ մեր որդին՝ Քամքամն միաբանեցաք մեծ յուսով ի սբ. Աստուածածինս եւ տուաք արդիւնս յեկեղեցիս: Սիմեոն Շոթոռկա որդին եւ միաբանքս էտուն մեզ Գ. ժատարագ ի տաւնի Աբրահամու եւ Խորենա»[61]: Վիմագրում հիշատակված Շոթոռկա որդի Սիմեոնը վանքի առաջնորդ չէ, քանզի արձանագրությունում չի հիշատակվում որպես այդպիսին: Ավելին, այլ արձանագրություններում վանքի առաջնորդ է հիշատակվում Կիրակոս վարդապետը[62]: Վիմագրից երևում է, որ Սիմեոնը նույնիսկ հոգևորական էլ չէ, որովհետև (հայր, վարդապետ, առաջնորդ, տեր) հոգևորականության որևէ տիտղոս մատնանշված չէ: «Բայց քանի որ նա իշխանություն է ունեցել վանքի գործերի վերաբերյալ կարգադրություններ անելու, - գրում է Կ. Ղաֆադարյանը,- պետք է ենթադրենք, որ Սիմեոն Շոթոռկա որդին Սանահնում եղել է իշխանավոր»[63]:

Աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները պարոնտերության պայմաններում կրել են հիմնականում համագործակցային բնույթ: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ եկեղեցին օտար տիրապետության

---

[58] **Մխիթար Գոշ,** *Գիրք Դատաստանի, էջ 28-29, հմմտ. Կանոնագիրք հայոց, հ. Բ, աշխատասիրությամբ* ***Վ. Հակոբյանի****, Ե., 1971, էջ 121:*

[59] **Ավագյան Ս.,** *նշվ. աշխ., էջ 77:*

[60] *Նույն տեղում, էջ 85:*

[61] **Ղաֆադարյան Կ.,** *Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Ե., 1957, էջ 155-156:*

[62] *Նույն տեղում:*

[63] *Նույն տեղում, էջ 156: Շոթոռկա որդի Սիմեոնի իշխանավոր լինելը փաստում է նաև Գարեգին Հովսեփյանը. «Նշանակում է Դավիթը տեղական իշխան էր Հաղբատի և Սանահնի միջև ընկած մի երկրամասի»,* **Հովսեփյան Գ.,** *Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, էջ 32:*

օրոք աշխարհիկ իշխանական տիրույթների պահպանման լավագույն պատվարն էր: Դրանով պետք է բացատրել XIV-XV դարերում հայ վանքապատկան հողատիրության ընդարձակումը, որը նախ և առաջ իշխանական տների թուլացման նշան էր:

ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ИНСТИТУТА ЦЕРКОВНОГО ПАТРОНАТА В АРМЕНИИ (XI-XIV вв.)

ТОРОСЯН В. Г.

Резюме

Церковный патронат в Армении формировался и развивался в условиях отсутствия независимого, централизованного государства. Многие феодалы в период сельджукского и монгольского владычества, исходя из того, что армянская церковь была освобождена от налогов, пожертвовали свои владения храмам и церквям. При этом настоятелями последних они назначали представителей своего дома, продолжая свободно распоряжаться пожертвованными владениями. Совмещение мирской и духовной властей в руках одного и того же княжеского рода было характерно для княжеств Хачена, Сюника, Артаза, Ерзнка, Васпуракана и др.